ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Տեղեկություններ ընկերության մասին 2

2.Արտաքին աուդիտն իրականացնող անձը..... 2

3.Կառավարման մարմինները և կառավարման մարմնի անդամները ... 2

4. Տեղեկություններ դուստր և փոխկապակցված անձանց վերաբերյալ 5

5.Խոշոր բաժնետերերը 5

6.Աշխատակիցները 6

7. Արտոնագրեր և լիցենզիաները..... 6

8.Բիզնեսի արդյունքների նկարագիրը.....7

9.Հիմնական միջոցները..... .8

10.Ֆինանսական վերլուծություն..... 10

11. Շահույթի բաշխումը և կանխատեսումը..... 17

1.Տեղեկատվություն Ընկերության մասին

«Արփա-Սևան» բաց բաժնետիրական ընկերությունը հիմնադրվել է 1969թ., որպես «Արփա-Սևան» հատուկ մասնագիտացված շինարարական կազմակերպություն: 1995թ.-ին վերակազմավորվել է ՀՀ էներգետիկայի նախարարության «Արփա-Սևան» ՓԲԸ, իսկ 1998թ.-ին «Արփա-Սևան» ԲԲԸ:
Ընկերությունը գրանցված է պետական ռեգիստրի Արաբկիրի ստորաբաժանման կողմից, գրանցման համարը՝ 264.120.00831, գրանցման ամսաթիվը 16.02.1995թ :
Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 51 130 000 ՀՀ դրամ: Ընկերության հիմնական գործունեությունը կապիտալ շինարարության իրականացումն է քաղաքաշինության, էներգետիկական, հիդրոտեխնիկական, կապի և տրանսպորտային ոլորտներում:

19.01.2011թ «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ կողմից Ընկերության հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերը ցուցակվել և ընդգրկվել են Բորսայի բաժնետոմսերի երկրորդային (B) ցուցակում, և թույլատրել առևտրին ցուցակված բաժնետոմսերի, հասցեական գործարքների և ռեպո գործարքների հարթակներում:

Սկսած 2011թ.-ից Ընկերությունը հետևում է ՀՀ Կառավարության 30.12.2012թ. N 1769-Ա որոշմամբ հավանության արժանացած Կորպորատիվ կառավարման կանոնագրքի սկզբունքներին:

2. Արտաքին աուդիտն իրականացնող անձը

Ընկերության աուդիտը իրականացնում է «ԹՄ Աուդիտ» փակ բաժնետիրական ընկերությունը:
«ԹՄ Աուդիտ» ՓԲԸ գտնվելու վայրն ՀՀ, Երևան 0014, Պ. Սևակ 8 Հեռ.՝(374 60) 60 70 80, www. tmaudit.am «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ այլ մասնագիտական միություններին չի անդամակցում:

3. Կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը բաժնետերերի ընդհանուր ժողովն է: Կառավարման մյուս մարմիններն են՝ Խորհուրդը, Վերստուգող հանձնաժողովը, Գլխավոր տնօրենը և Վարչությունը:
Ընկերության խորհրդի քանակական կազմը սահմանված է 8 անդամից:
Ընկերության վերստուգող հանձնաժողովը կազմված է 3 անդամից:
Ընկերության վարչության կազմը սահմանված է 10 անդամից:

Ընկերության կառավարման մարմինների անդամների վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են ներքոհիշյալ աղյուսակներում:

3.1.Խորհուրդ և վարչություն

Աղյուսակ 1

	Ազգանուն, անուն, հայրանուն	Բնակության (հաշվառման) վայրը	Զբաղեցրած պաշտոնը		Անձին պատկանող Ընկերության բաժնետոմսերի քանակը
			ընկերությունում	փոխկապակցված ընկերությունում	
1.	Դավթյան Ատոմ Ռազմիկի	ք. Երևան, Մամիկոնյանց 24/2	Խորհրդի նախագահ	«Նավասարդ շինարար» ՍՊԸ և «Էմի-պլաստ» ՍՊԸ տնօրեն, «Դիլիջանի առողջարան» ԲԲԸ խորհրդի անդամ	155հատ / 0.7578 %
2.	Հակոբյան Պարույր Հակոբի	ք.Երևան. Անտառային փող. 122/7 տուն	Խորհրդի անդամ, Գլխ. տնօրեն, Վարչության նախագահ	«Մեղմ զեփյուռ» ՍՊԸ և «Ձրասահք» ՍՊԸ- տնօրեն, «Արփա-Սևան» ԲՀ - հոգաբարձուների խորհրդի նախագահ,	124հատ/ 0.6063 %
3.	Նավասարդյան Կարինե Արշավիրի	ք. Երևան,Զ. Սարկավագի 123.36	Խորհրդի անդամ	«Դիլիջանի առողջարան» ԲԲԸ խորհրդի անդամ	2673հատ / 13.0696 %
4.	Հակոբյան Արմեն Ռաֆիկի	ք. Երևան, Զ.Սարկավագի 19/ա	Խորհրդի անդամ, Գլխ.տնօր.1-ին տեղ. գլխ. ճարտ., վարչության անդամ	«Բազենք» ՓԲԸ -տնօրեն, խորհրդի անդամ, «Դիլիջանի առողջարան» ԲԲԸ խորհրդի նախագ	505հատ / 2.4692 %
5.	Վարդանյան Ձորիկ Հովհաննեսի	ք. Երևան, Նորքի 8-րդ զանգ.29շ 33բն	Խորհրդի անդամ, Պլանա-տնտեսագ. բաժնի պետ	«Դիլիջանի առողջարան» ԲԲԸ խորհրդի անդամ «Արփա-Սևան» ԲՀ - հոգաբարձուների խորհրդի անդամ,	34հատ / 0.1662 %
6.	Պետրոսյան Ռաֆայել Կառլենի	ք. Երևան, Ա- Սերոբի 7-29	Խորհրդի անդամ, Մարքեթինգի ԲՊ տեղակալ	-	8հատ/ 0,03912%
7.	Աղայան Ռուզան Պավլիկի	ք. Երևան, Ավան, Դուրյան 44-50	Խորհրդի անդամ, ճարտարա գետ	-	8հատ/ 0,03912%
8.	Դանիելյան Արթուր Ռոբերտի	ք. Երևան, Վահագնի թղմ. 3տեղ. Արաքս 33	Խորհրդի անդամ	-	0
9.	Փարսյան Սեդա Սերբիայի	ք. Երևան, Գր. Արծրունի 92-17	Գլխ. հաշվապահ, վարչության անդամ	«Դիլիջանի առողջարան» ԲԲԸ, «Ձրասահք» ՍՊԸ և «Սի-լաբ» ՍՊԸ- ներում գլխ. հաշվապահ	26 հատ / 0.1271 %

10.	Հակոբյան Վահրամ Ջանիկի	ք.Երևան, Նորք 9փ.26տուն	գլխ.տնօրենի տեղակալ ֆինանս գծով, վարչության անդամ	«Բազենք» ՓԲԸ - փոխտնօրեն ֆինանսական գծով, «Ջրասահք» ՍՊԸ - փոխտնօրեն	0
11.	Ղազարյան Արտաշես Սոսիկի	ք.Երևան, Սարկավագի 121 բն. 15	Մարքեթինգի բաժնի պետ, վարչության անդամ	-	42հատ / 0.2054 %
12.	Աղեկյան Աշխեն Նորիկի	ք.Երևան, Գուլակյան 80/48	Կադր.բաժնի պետ, վարչության անդամ	«Դիլիջանի առոջարան» ԲԲԸ, վերստուգող հանձնաժ. նախագահ, «Բազենք» ՓԲԸ և «Ջրասահք» ՍՊԸ - Կադրերի ԲՊ	14հատ / 0.0685 %
13.	Փառլաքյան Հարություն Կորյունի	ք.Երևան, Այգեստան 9փ.41շ.28բն.	Գլխ. մասնագետ, վարչության անդամ	-	13հատ / 0.0635 %
14.	Այվազյան Գեորգի Արմենակի	ք.Երևան,Գյուլի քեխվյան նրբ. 2շ.56բն.	Գլխ. էներգետիկ, վարչության անդամ	-	0

3.2. Վերստուգող հանձնաժողով

Աղյուսակ 2

	Ազգանուն, անուն, հայրանուն	Բնակության (հաշվառման) վայրը	Զբաղեցրած պաշտոնը		Անձին պատկանող Ընկերության բաժնետոմսերի քանակը
			ընկերությունում	փոխկապակցված ընկերությունում	
1.	Պետրոսյան Գագիկ Նորայրի	ք. Երևան, Մաշտոցի պող. շ 40ա, բն 18	Տեղամասի պետ	-	0
2.	Եղիյան Սպարտակ Սերյոժայի	Ք.Երևան, Կոմիտասի 19/8-16	Իրավաբանական բաժնի պետ	-	144հատ / 0.7041 %
3.	Գևորգյան Նարինե Պարույրի	ք. Երևան, Նորագավիթ, 8-րդ կմ., 2-շենք		-	2հատ / 0.0098 %

Տեղեկություններ ընկերության կառավարման մարմնի անդամների և նրանց հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ:

Ընկերության խոշոր բաժնետեր Հ. Հակոբյանի հետ, որպես միևնույն ընտանիքի անդամ, փոխկապակցված անձիք են ընկերության կառավարման մարմնի հետևյալ անդամները՝

- Որդին - ընկերության գլխավոր տնօրեն՝ Պարույր Հակոբյանը

- Եղբայրը - ընկերության գլխ.ճարտ. խորհրդի անդամ՝ Արմեն Հակոբյանը,
- Քրոջ ամուսինը - ընկերության խորհրդի նախագահ՝ Ատոմ Դավթյանը

Վերջին հինգ տարվա ընթացքում ընկերության կառավարման մարմինների անդամների նկատմամբ դատական գործեր չեն հարուցվել, պետական որևէ կառավարման մարմնի կողմից պատասխանատվության չեն ենթարկվել և առնչություն չեն ունեցել որևէ սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացի հետ:

- Շահերի բախում որպես թողարկողի կառավարման մարմնի անդամ թողարկողի նկատմամբ իր պարտականությունների և իր անձնական շահերի միջև բացակայում է:

4. Տեղեկություններ դուստր և փոխկապակցված անձանց վերաբերյալ

4.1.«Արփա-Սևան» բաց բաժնետիրական ընկերությունը՝

- 15.06.2004թ. հիմնադրել է «Արփա-Սևան նախագիծ» փակ բաժնետիրական դուստր ընկերությունը: Հասցեն `0012. ք. Երևան Վ. Վաղարշյան -20:

«Արփա-Սևան» ԲԲԸ տիրապետում է դուստր ընկերության բաժնային արժեթղթերի 100 տոկոսին:
«Արփա-Սևան» ԲԲԸ և «Արփա-Սևան նախագիծ» ՓԲԸ կառավարման մարմինների անդամները փոխկապակցված անձիք չեն:
«Արփա-Սևան նախագիծ» ՓԲԸ կառավարման մարմինների անդամները և նրանց հետ փոխկապակցված անձինք չեն հանդիսանում «Արփա-Սևան» ԲԲԸ բաժնետերեր:

- 23.08.2010թ. հիմնադրել է «Արփա-Սևան» Բարեգործական Հիմնադրամը:
  Հասցեն՝ 0012. ք. Երևան Վ. Վաղարշյան -20:

4.2. Ընկերության հետ փոխկապակցված իրավաբանական անձինք են՝

1. «Դիլիջանի առողջարան» ԲԲԸ
2. «Բազենք» ՓԲԸ
3. «Զրասահք» ՍՊԸ
4. «Մեղմ Զեփյուռ» ՍՊԸ
5. «Էմի Պլաստ» ՍՊԸ
6. «Նավասարդ շինարար» ՍՊԸ
7. «Սի-լաբ» ՍՊԸ

5. Խոշոր բաժնետերերը

Ընկերության խոշոր բաժնետերերն են՝

1.Հակոբյան Հակոբ Ռաֆիկի - տիրապետում է 11 286 հատ բաժնետոմսի, որը կազմում է Ընկերության կանոնադրական կապիտալի 55,183 %-ը:

2. Նավասարդյան Կարինե Արշավիրի - տիրապետում է 2673 հատ բաժնետոմսի, որը կազմում է Ընկերության կանոնադրական կապիտալի 13.0696 % -ը:

Բոլոր բաժնետերերին պատկանող բաժնետոմսերից յուրաքանչյուրը տալիս են ձայնի միևնույն իրավունքը:

6. Աշխատակիցները

Ընկերության աշխատակիցների թվաքանակի վերաբերյալ տվյալները ներկայացված են թիվ -3 աղյուսակում:

Աղյուսակ 3

	Տարեթվերը			
	2013թ.	2014թ	2015թ	2016թ
Աշխատողների միջին տարեկան թվաքանակը, մարդ	469	460	336	380
որից ղեկավարներ	51	49	46	42

7.Արտոնագրեր և լիցենզիաներ

1.ՀՀ Քաղաքաշինության նախարարություն

ԼԻՑԵՆԶԻԱ 7496
ՔԱՂԱՔԱՇԻՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ
(Բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջվող աշխատանքների)
Տրված է 14.02.2003թ. գործողության ժամկետը -անժամկետ

1.1. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ N 7496 - 01
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ՝ ԲՆԱԿԵԼԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
Տրված է 14.02.2003թ. գործողության ժամկետը -անժամկետ

1.2. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ N 7496 - 02
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ՝ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ
Տրված է 14.02.2003թ. գործողության ժամկետը -անժամկետ

1.3. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ N 7496 - 03
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ՝ ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ
Տրված է 14.02.2003թ. գործողության ժամկետը -անժամկետ

1.4. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ N 7496 - 04
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ՝ ԷՆԵՐԳԵՏԻԿ
Տրված է 14.02.2003թ. գործողության ժամկետը -անժամկետ

1.5. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ N 7496 - 05
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ՝ ԿԱՊԻ
Տրված է 14.02.2003թ. գործողության ժամկետը -անժամկետ

2. ԼԻՑԵՆԶԻԱ 16071
ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ
/ բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջվող աշխատանքների/
Տրված է 27.02.2015թ. գործողության ժամկետը -անժամկետ

2.1. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ N 16071 - 02

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ՝ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ
Տրված է 27.02.2015թ. գործողության ժամկետը -անժամկետ

2.2. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ N 16071 - 03
ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ՝ ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ
Տրված է 27.02.2015թ. գործողության ժամկետը -անժամկետ

2.3. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ N 16071 - 04
ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ՝ ԷՆԵՐԳԵՏԻԿ
Տրված է 27.02.2015թ. գործողության ժամկետը -անժամկետ

3.Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարություն
ԼԻՑԵՆԶԻԱ
Պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների առևտրի և պայթեցման աշխատանքների կատարման
ՊՆՊՍԱՊԱ N 32
Տրված է 11.02.2013թ. գործողության ժամկետը - անժամկետ:

8. Բիզնեսի արդյունքների նկարագիրը

Հիմնական գործունեությունը և շուկաները

2016թ. ընկերության կողմից կատարված շինարարական աշխատանքների և մատուցված ծառայությունների իրացումից հասույթը կազմել է՝ 3 736 264 հազ.դր., որոնցից առավել կարևոր աշխատանքների և մատուցված ծառայությունների վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են թիվ -4 աղյուսակում:

Աղյուսակ 4

	Պատվիրատու կազմակերպության և կառույցի անվանումը	հազ.դր.
1	Աշխատանքների կատարումից հասույթ, այդ թվում՝	3 484 279.2
1.1	ՀՀ Գյուղատնտեսության նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտեի «ԱՍԹՎ ՕԻԳ» ՊՀ. «Արփա-Սևան» ջրատարի թիվ 2 թունելի առանձին հատվածների վերականգնման և վերակառուցման աշխատանքներ	924 801.8
1.2	Ոռոգման համակարգերի բարելավման ծրագիր; «Քազցրաշենի,Ավշար-Այգևանի, Արմաշի,Արազափի, Ջրաշեն-Ազատի և Ջովքի ջրհան կայանների հեռացնող ջրանցքների վերականգնում»	64 346.7
1.3	ՀՀ կառավարության աշխատաակզմի գյուղական տարածքների տնտեսական զարգացման ՕԻԳ ՊՀ Վայոց Ձորի, Գեղարքունիքի,Արագածոտն մարզերի ջրամատակարարում Վայոց Ձորի մարզի ներտնտեսական ցանցերի վերակառուցում	1 156 548 73 766.2

1.4	ՀՀ Պաշտպանության նախարարություն «300 տեղով զորանոցի կառուցում»	33 196.0
1.5	«Մեծն Էրիկ» ՍՊԸ «Դիլիջանի ցամքուրդային թունելիմիջանկյալ հատվածի կառուցում »	116 701.2
1.6	«Կապավոր» ՍՊԸ «Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահմանի ճանապարհային հատվածի թիվ 2 թունելում քանդման ու մշակման/կառուցման համաթունելային աշխատանքներ »	200 272.2
1.7	«Լիդիան Արմենիա» ՓԲԸ «Գնդևազի ջրավազանը սնուցող ջրանցքային համակարգի վերականգնման և այլ շինարարական աշխատանքներ »	697 467.4
1.8	«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ ՀՇԳՑԲ թիվ 1 էներգաբլոկի շրջանառու ջրի համակարգից նստվածքների մաքրման աշխատանքներ	10 927.3
2	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտե «Արփա-Սևան» թունելի շահագործում, «Որոտան-Արփա-Սևան» թունելի պահպանման ծառայությունների մատուցում	206 252.4
3	Պաշարների վաճառքից հասույթ	193 696.8
4	Ծառայությունների մատուցումից հասույթ	47 974.1
5	Այլ եկամուտներ	10 313.9

Ընկերության կողմից կատարված շինարարական աշխատանքները և մատուցած ծառայությունները իրացվում են ներքին շուկայում:

9.Հիմնական միջոցները

31.12.2016թ. դրությամբ ընկերության հիմնական միջոցների արժեքը կազմել է 5 464 018 հազ. դր., կուտակված մաշվածությունը՝ 2 969 048 հազ. դր., հաշվեկշռային արժեքը 2 494 970 հազ. դր.: Հիմնական միջոցների ընդհանուր մաշվածությունը կազմել է 54.3%:

Ըստ առանձին դասերի հիմնական միջոցների արժեքի, հաշվեկշռային արժեքի և կուտակված մաշվածության վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ - 5 ում:

Աղյուսակ 5
հազ. դր.

Դասի անվանումը	Արժեքը	Կուտակված մաշվածություն	Հաշվեկշռ. արժեքը	Մաշվածքը %
Շենքեր և կառուցվածքներ	995 585	231 165	764 420	23,2
Մեքենա - սարքավորումներ	2 611 627	1 813 961	797 666	69,5
Տրանսպորտային միջոցներ	1 258 447	835 812	422 635	66,4
Արտադրական և տնտեսական գույք	67 503	49 013	18 490	72,6

Այլ հիմնական միջոցներ	47 407	39 097	8 310	82,5
Հողամասեր	483 449		483 449	
Ընդամենը հիմնական միջոցներ, 31.12.2016թ.	5 464 018	2 969 048	2 494 970	54,3

Նախորդ տարվա համապատասխան ցուցանիշները կազմել են՝

Ընդամենը հիմնական միջոցներ, 31.12.2015թ.	5407329	2 704 941	2 702 388	50,0
Նախորդ տարվա համեմատ աճը	56 689	264 107	-207 418	

Ընկերության հիմնական միջոցների արժեքը նախորդ տարվա համեմատ աճել է 1.1 %, որը կազմում է 56 689 հազ.դր.:

Հիմնական միջոցների արժեքի աճը հիմնականում տեղի է ունեցել ընկերության կողմից նոր հիմնական միջոցների ձեռք բերման, ինչպես նաև գործող շինարարական մեքենաների և տրանսպորտային միջոցների հիմնանորոգման և արդիականացման արդյունքում:

Վերջին հինգ տարիների ընթացքում Ընկերության կողմից ձեռք բերված հիմնական միջոցների և արդիականացման վրա կատարված ծախսերի վերաբերյալ տվյալները ներկայացվում են աղյուսակ - 6 ում:

Աղյուսակ 6
հազ.դր.

Հիմնական միջոցների դասը	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.
Մեքենաներ և սարքավորումներ	155 748	364 377	175 211	123 268	37 186.5
Տրանսպորտային միջոցներ	111 254	25 982	23 867	69 589	46 223.0
Այլ հիմնական միջոցներ	83 195	7 035	1 1530	7 261	16 894.8
Ընդամենը	350 197	397 394	210 608	200 118	100 304.3

Ընկերությունը 2017թ. նախատեսում է շարունակել գործող մեքենա-սարքավորումների և տրանսպորտային միջոցների արդիականացման գործընթացը և իրականացնել մոտ 400 000 հազ.դր. նոր՝ էական մեծություն կազմող հիմնական միջոցների ձեռքբերում:

Ընկերության տրամադրության տակ գտնվող էական մեծություն կազմող հիմնական միջոցը դա ք. Երևան, Վ.Վաղարշյան – 20 հասցեում գտնվող 1840.1 քառ. մ. տարածքով չորս հարկանի վարչական շենքն է, որի շուկայական արժեքը իր զբաղեցրած հողատարածքի հետ միասին կազմում է 616 498 հազ.դրամ:

Ընկերությանը պատկանող էական մեծություն չկազմող, բայց ընկերության համար կարևոր նշանակություն ունեցող շենքերից, շինություններից և հողատարածքներից են՝

- ք. Երևան, Արտաշիսյան (Ծերեթելի) -106 հասցեում գտնվող 903.2ք.մ. անշարժ գույքը 0.60637 հա հողատարածքով, որը օգտագործվում է ընկերության ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման, վերանորոգման արհեստանոցների, պահեստների համար;

- ք. Երևան, Արտաշիսյան (Ծերեթելի) -105 հասցեում գտնվող 1606.7ք.մ. անշարժ գույքը 1.78845 հա հողատարածքով, որը օգտագործվում է որպես ապրանքանյութական արժեքների պահեստավորման բազա, վերանորոգման արհեստանոց, բետոնի պատրաստման արտադրամաս և այլն;

Բոլոր հիմնական միջոցները սեփականության իրավունքով պատկանում են ընկերությանը:

Սեփականության իրավունքով ընկերությանը պատկանող գույքից՝

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ, որպես վարկային և բանկային երաշխիքների պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման երաշխիք գրավադրված են՝

- ք. Երևան, Վ.Վաղարշյան – 20 հասցեում գտնվող վարչական շենքը;
- ԿԱՄԱԶ KC 55713-1K մակնիշի երկու ավտոկռունկները:

«Պրոմեթեյ Բանկ» ՍՊԸ-ում որպես վարկային և երաշխիքային պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման երաշխիք գրավադրված են՝

- Ընկերության խոշոր բաժնետեր Հ. Հակոբյանին պատկանող 11 286 հատ անվանական բաժնետոմսերը;
- Atlas Copco XAS 137 DD EC BOX մոդելի 4 հատ շարժական կոմպրեսորները;
- Atlas Copco XAS 156 DD մոդելի 2 հատ շարժական կոմպրեսորները;
- Atlas Copco XAS 186 DD C3 EC BOX մոդելի 1 շարժական կոմպրեսորը;
- Atlas Copco QAX 40 մոդելի 6 հատ շարժական գեներատորները;
- HYUNDAI մակնիշի R 290 LC-7A մակնիշի թրթուրավոր էքսկավատորը;
- CAT-428F էքսկավատոր-ամբարձիչը;
- ELKON ELKOMIX 35 մոդելի բետոնի մշակման և արտադրության սարքավորումը;
- MAN TGA 41.480 8x4 BB WW մակնիշի ինքնաթափ ավտոմեքենան:

Գրավադրված հիմնական միջոցների օգտագործման սահմանափակումները կայանում է նրանում, որ առանց գրավառուի համաձայնության ընկերությունը չի կարող այլ տեղ գրավ դնել, վարձակալության հանձնել կամ օտարել այդ հիմնական միջոցները:

10. Ֆինանսական վերլուծություն

10.1. Ֆինանսական վիճակի և դրա փոփոխության վերլուծություն

Ֆինանսական վիճակի և դրա փոփոխության վերլուծությունը իրականացնելու համար ընկերության հաշվեկշիռը ներկայացվում է ներքոհիշյալ տեսքով՝

Աղյուսակ 7

Ցուցանիշների անվանումը	Հաշվետու ժամանակաշրջանի վերջին		Նախորդ ժամանակաշրջանի վերջին		Աճը	Աճի տեմպը
	հազ.դր.	%	հազ.դր.	%	հազ.դր.	%
1.Ակտիվներ	4 821 935	100,0	5 390 986	100,0	-569 051	89,4
1.1. Ոչ ընթացիկ ակտիվներ	3 231 733	67,0	3 361 735	62,4	-130 002	96,1
1.2.Ընթացիկ ակտիվներ	1 590 202	33,0	2 029 251	37,6	-439 049	78,4
1.2.1. Պաշարներ	431 957	9,0	834 608	15,5	-402 651	51,8

1.2.2.Դեբիտորական պարտքեր	947 516	19,7	1 025 372	19,0	-77 856	92,4
1.2.3.Դրամական միջոցներ	210 729	4,4	169 271	3,1	41 458	124,5
2.Պասիվներ	4 821 935	100,0	5 390 986	100,0	-569 051	89,4
2.1.Սեփական Կապիտալ	3 955 895	82,0	3 881 375	72,0	74 520	101,9
2.2.Փոխառու կապիտալ	866 040	18,0	1 509 611	28,0	-643 571	57,4
2.2.1. Ոչ ընթացիկ պարտավորություններ	125 278	2,6	120 318	2,2	4 960	104,1
2.2.2. Ընթացիկ ֆինանսական պարտավորություններ	131 114	2,7	493 132	9,1	-362 018	26,6
2.2.3.Կրեդիտորական պարտք	609 648	12,6	896 161	16,6	-286 513	68,0

Ինչպես երևում է վերը ներկայացված աղյուսակից հաշվետու ժամանակաշրջանի վերջում, նախորդ տարվա համեմատ, Ընկերության հաշվեկշռի կառուցվածքը և դինամիկան բնութագրող ցուցանիշներում տեղի են ունեցել զգալի փոփոխություններ, մասնավորապես՝

Ընկերության ակտիվները նախորդ տարվա համեմատ նվազել են 569 051 հազ.դր., կամ 10.6 %, և հաշվետու ժամանակաշրջանի վերջում կազմել են 4 821 935 հազ.դր.:

Նշված փոփոխությունը 22 % պայմանավորված է ոչ ընթացիկ ակտիվների նվազմամբ և 77.2 % - ընթացիկ ակտիվների նվազմամբ:

Ոչ ընթացիկ ակտիվները նախորդ տարվա համեմատ նվազել են 130 002 հազ.դր. կամ 3.9 %, որը պայմանավորված է հիմնական միջոցների տարեկան մաշվածության արդյունքում հաշվեկշռային արժեքի 207 418 հազ.դր նվազմամբ և տրված փոխառությունների գումարի 78 069 հազ.դր. աճով:

Ընթացիկ ակտիվները նախորդ տարվա համեմատ նվազել են 439 049 հազ.դր., կամ 21.6 %, որը հիմնականում պայմանավորված է պաշարների և ծառայությունների համար տրված կանխավճարների արժեքի նախորդ տարվա համեմատ՝ 449 702 հազ.դր., կամ 89.9%, ինչպես նաև առևտրային և այլ դեբիտորական պարտքերի՝ 73 427 հազ.դր., կամ 8.4% նվազումով;

Դրամական միջոցները նախորդ տարվա համեմատ աճել են 41 458 հազ.դր., կամ 24.5%:

էական փոփոխություններ են տեղի ունեցել նաև պասիվների՝ ինչպես կառուցվածքում, այնպես էլ դրանց դինամիկան բնութագրող ցուցանիշներում:

Սեփական կապիտալի տեսակարար կշիռը նախորդ տարվա 72%-ից աճել է 10% և կազմել 82 %, իսկ պարտավորությունների տեսակարար կշիռը 28% -ից նվազել է և կազմել 18%:

Ընկերության սեփական կապիտալի ոչ էական փոփոխության պայմաններում, որը նախորդ տարվա համեմատ աճել է 74 520 հազ.դր. կամ 1.9 %, էական փոփոխություններ են տեղի ունեցել Ընկերության պարտավորությունների կառուցվածքում:

Պարտավորությունները նախորդ տարվա համեմատ նվազել են 643 571 հազ.դր., կամ 42.6 %, և հաշվետու ժամանակաշրջանի վերջում կազմել են 866 040 հազ.դր., այդ թվում՝

- Ընթացիկ ֆինանսական պարտավորությունները նախորդ տարվա վերջի համեմատ նվազել են 362 018 հազ.դր., կամ 73.4%,:
- կրեդիտորական պարտավորությունները նախորդ տարվա վերջի համեմատ, նվազել են 286 513 հազ.դր., կամ 32%, :

10.2. Ֆինանսական կայունության վերլուծություն

Ֆինանսական կայունության վերլուծությունը կատարվում է հետևյալ ցուցանիշների միջոցով՝

10.2.1. Ֆինանսական անկախության գործակից:

$$Գ_1 = 3\,955\,895 / 4\,821\,935 = 0.82$$

Այս ցուցանիշի ցանկալի փոքրագույն մակարդակը կազմում է 0.5:
Ցուցանիշի 0.82 արժեքը ցույց է տալիս, որ ընկերությունն իր գործունեությունը հիմնականում ֆինանսավորում է սեփական կապիտալի հաշվին:

10.2.2. Պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցության գործակից:

$$Գ_2 = 866\,040 / 3\,955\,895 = 0.22$$

Ցուցանիշի 0.22 արժեքը ցույց է տալիս,որ ընկերության պարտավորությունները սեփական կապիտալի միավորի հաշվով գտնվում են ցածր մակարդակում և որ ընկերությունը քիչ է օգտվում փոխառու կապիտալից:

10.2.3. Ինքնավարության գործակից:

$$Գ_3 = 4\,081\,173/ 4\,821\,935 =0.85$$

Ինքնավարության գործակցի 0.85 արժեքը ցույց է տալիս, որ Ընկերության միջոցների հիմնական մասը ձևավորվել է երկարաժամկետ հիմունքներով ներգրավված աղբյուրների, հիմնականում՝ սեփական կապիտալի հաշվին:

10.2.4. Գործող կապիտալ:

$$Գ_4 =1\,590\,202 – 740\,762 = 849\,440 \text{ հազ.դր.}$$

Գործող կապիտալի արժեքը ցույց է տալիս, որ ընթացիկ ակտիվները ապահովված են սեփական կապիտալով:

10.2.5. Ընթացիկ ակտիվների՝ գործող կապիտալով ապահովվածության գործակից:

$$Գ_5 = 849\,440 / 1\,590\,202 = 0.53$$

Այս ցուցանիշի նորմատիվային փոքրագույն արժեքը կազմում է 0.1:

10.2.6. Պաշարների՝ գործող կապիտալով ապահովվածության գործակից:

$$Գ_6 = 849\,440 / 381\,386 = 2.23$$

Այս ցուցանիշի նորմատիվային փոքրագույն արժեքը կազմում է 0.5:

10.2.7. Սեփական կապիտալի մանևրայնության գործակից:

$Գ_7$ = 849 440 / 3 955 895 = 0.21

Այս ցուցանիշի նորմատիվային փոքրագույն արժեքը կազմում է 0.5:
Ցուցանիշի 0.21 արժեքը ցույց է տալիս,որ ընկերության սեփական կապիտալի հաշվին ձևավորված միջոցները ամբողջությաբ չեն օգտագործվում:

10.2.8. Գույքի ռեալ արժեքի գործակից:

$Գ_8$ =2 876 356 / 4 821 935 = 0.6

Այս ցուցանիշի 0.6 արժեքը (ընդունելի փոքրագույն արժեքը 0.5) ցույց է տալիս, որ ընկերության արտադրական պոտենցիալը գտնվում է բավարար վիճակում:

10.3. Հաշվեկշռի իրացվելիության վերլուծություն

Իրացվելիությունը բնութագրող ցուցանիշներն են՝

10.3.1. Ընթացիկ իրացվելիության գործակից

$Գ_9$ =1 590 202 / 740 762 = 2.15

Այս ցուցանիշի սահմանային նվազագույն արժեքը 2 է:

Ընթացիկ իրացվելիության գործակցի արժեքը՝ 2.15 ցույց է տալիս, որ Ընկերության ընթացիկ պարտավորությունները ամբողջությամբ ապահովված են ընթացիկ ակտիվներով:

10.3.2. Արագ իրացվելիության գործակից:

$Գ_{10}$ =1 208 816 / 740 762 = 1.63

Այս ցուցանիշի սահմանային փոքրագույն արժեքը 1 է:
Ընթացիկ իրացվելիության գործակցի արժեքը և ցույց է տալիս, որ Ընկերության ընթացիկ պարտավորությունները ապահովված են առավել իրացվելի ակտիվներով:

10.3.3. Բացարձակ իրացվելիության գործակից:

$Գ_{11}$ = 210 729 / 740 762 = 0.28

Այս գործակցի ցանկալի արժեքը ընկած է (0.2; 0.5) թվերի սահմաններում:

10.4. Ֆինանսական արդյունքների վերլուծություն

Ընկերության ֆինանսական արդյունքների և դրանց փոփոխության վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8

	Ցուցանիշների անվանումը	2016թ.		2015թ.	
		հազ.դր	%	հազ.դր	%
1	Հասույթ	3 736 264	100	2 965 544	100
2	Վաճառքի ինքնարժեք	-3 306 281	88,5	-2 623 510	88,5
3	Համախառն շահույթ	**429 983**	**11,5**	**342 034**	**11,5**
4	Իրացման ծախսեր	-90	0,0	-160	0,0
5	Վարչական ծախսեր	-186 999	-5,0	-209 359	-7,1
6	Այլ եկամուտներ (ծախսեր)	-19 876	-0,5	-59 940	-2,0
7	Գործառնական գործունեությունից շահույթ	**223 018**	**6,0**	**72 575**	**2,4**
8	Ֆինանսական եկամուտներ	75 746	2,0	84 665	2,9
9	Ֆինանսական ծախսեր	-51 029	-1,4	-81 064	-2,7
10	Փոխարժեքային տարբերությունից օգուտ (վնաս)	824	0,0	2 235	0,1
11	Շահույթը մինչև հարկումը	**248 559**	**6,7**	**78 411**	**2,6**
12	Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	-52 685	-1,4	-27 737	-0,9
13	Շահույթը հարկումից հետո	**195 874**	**5,2**	**50 674**	**1,7**
14	Ընդամենը համապարփակ եկամուտ	195 874	5,2	50 674	1,7
15	-որից մայր կազմակերպության սեփականատերերին	195 874	5,2	50 674	1,7
	Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ				
16	Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	9,58		2,48	
17	Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ	9,58		2,48	

Ինչպես երևում է վերը ներկայացված աղյուսակից, կատարած աշխատանքների, մատուցած ծառայությունների իրացումից հասույթը նախորդ տարվա 2 965 544 հազ.դր. համեմատ աճելէ 770 720 հազ.դր.-ով, /կամ 26%/ և կազմել՝ 3 736 264 հազ.դր:

Համախառն շահույթը նախորդ տարվա համեմատ աճել է 87 949 հազ.դր. և կազմել՝ 429 983 հազ.դր.:

Վարչական ծախսերը նախորդ տարվա համեմատ նվազել են 22 360 հազ.դր. կամ 10.7% և կազմել՝ 186 999 հազ.դր, այլ ծախսերը նվազել են 40 064 հազ.դր. կամ 66.8% :

Ֆինանսական և արտարժույթի փոխարժեքային տարբերությունից եկամուտները նախորդ տարվա համեմատ աճել են 19 705 հազ.դր. և կազմել՝ 25 541հազ.դր.;

Արդյունքում շահույթը մինչև հարկումը կազմել է 248 559հազ.դր.

Շահութահարկի գծով ծախսը 52 685 հազ.դր.

Զուտ շահույթը հարկումից հետո կազմել է 195 50 674 հազ.դր.

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը՝ 9580 դրամ:

10.5.Գործարար ակտիվության և կառավարման արդյունավետության վերլուծություն

Գործարար ակտիվության և կառավարման արդյունավետության վերլուծությունը թույլ է տալիս գնահատել, թե որքանով է Ընկերությունը արդյունավետ օգտագործում իր միջոցները: Վերլուծության այս փուլում առանձնացվում են հետևյալ ցուցանիշները՝

1. Շրջանառելիության ցուցանիշներ
2. Շահութաբերության ցուցանիշներ

10.6. Ակտիվների շրջանառելիության վերլուծություն

Շրջանառելիության գործակիցների արժեքները և դրանց փոփոխության վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9

	Ցուցանիշների անվանումը	Շրջանառելիության գործակիցների			
			Արժեքները		Փոփոխության տեմպը,%
			2016թ.	2015թ.	
1	Ակտիվների շրջանառելիության գործակից	$Գ_{12}$	0,73	0,57	128,1
2	Սեփական կապիտալի շրջանառ.գործակից	$Գ_{13}$	0,95	0,76	125,0
3	Արտադրության միջոցների շրջանառելիության գործակից	$Գ_{14}$	1,26	0,84	150,0
4	Հիմնական միջոցների շրջանառելիության կամ ֆոնդահատույցի գործակից	$Գ_{15}$	1,44	1,02	141,2
5	Ընթացիկ ակտիվների շրջանառելիության գործակից	$Գ_{16}$	2,06	1,62	127,2
5.1	Ընթացիկ ակտիվների շրջապտույտի տևողությունը օրերով	$Գ_{17}$	175	222	
6	Գործող կապիտալի շրջանառելիության գործակից	$Գ_{18}$	5,02	3,34	150,3
6.1	Գործող կապիտալի շրջապտույտի տևողությունը օրերով	$Գ_{19}$	72	108	
7	Պատրաստի արտադրանքի շրջանառելիության գործակից	$Գ_{20}$			
8	Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից:	$Գ_{21}$	2,96	2,75	107,6

8.1	Դեբիտորական պարտքերի շրջապտույտի միջին ժամկետը՝	$Գ_{22}$	122	131	
9	Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	$Գ_{23}$	5	4,3	115,6
9.1	Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի միջին ժամկետը, օր	$Գ_{24}$	73	84	
10	Պաշարների շրջանառելիության գործակից,	$Գ_{25}$	10	5	209

Ինչպես երևում է աղյուսակից ընկերության ակտիվների շրջանառելիության վիճակը բնութագրող ցուցանիշները նախորդ տարվա համեմատ զգալիորեն բարելավվել են, որը հիմնականում պայմանավորված է հաշվետու տարում հասույթի ծավալի 26 % աճով:

10.7. Շահութաբերության վերլուծություն

Կապիտալի շահութաբերությունը բնութագրող հիմնական ցուցանիշների արժեքները և դրանց փոփոխության վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10

	Շահութաբերության գործակիցների՝				
	Ցուցանիշների անվանումը		Արժեքները		Աճի տեմպը, %
			2016թ.	2015թ.	
1	Ակտիվների շահութաբերության գործակից	$Գ_{26}$	0,0384	0,0098	391,8
2	Սեփական կապիտաիլ շահութաբերության գործակից	$Գ_{27}$	0,0500	0,0130	384,6
3	Իրացման շահութաբերության գործակից	$Գ_{28}$	0,0524	0,0171	306,7
4	Ընթացիկ ակտիվների շահութաբերության գործակից	$Գ_{29}$	0,1232	0,0250	493,4

Կապիտալի շահութաբերության մակարդակը բնութագրող գործակիցների մեծությունը նախորդ տարվա համեմատ անհամեմատ բարելավվել են , որը հիմնականում պայմանավորված է հասույթի ծավալի աճով:

Աղյուսակ 11

հազ.դրամ

Ցուցանիշների անվանումը	Տարեթվերը				
	2011թ.	2012թ.	2013թ	2014թ	2015թ
Զուտ շահույթը	565 720	23 213	671 633	161 696	50 674
Շահութաբաժինների վճարմանն ուղղվող գումարը	140 000	51 130	102 260	105 000	80 000*
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ,	27. 66	1.14	32. 84	7.91	2.48

* 2015թ. շահաբաժինների վճարման համար բացի տվյալ տարվա 50 674 հազ.դր. զուտ շահույթից օգտագործվել է նաև 29 326 հազ.դր. Ընկերության չբաշխված շահույթից:

Նախատեսվում է 2016թ շահութաբաժինների վճարման համար օգտագործել 105 000 հազ.դր.:

Գլխավոր տնօրեն Պարույր Հակոբյան

Կատարող Զորիկ Վարդանյան
հեռ./012/ 21 11 11 (138)